ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԱԳՈՒՄ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՄԱՅԱՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑ

Արմավիր 2022

Ուսումնասիրությունն իրականացվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է նպաստել պետական կառավարման և ժողովրդավարական գործընթացներում ապացույցների վրա հիմնված և մասնակցային որոշումների կայացմանը: Ծրագիրն իրականացվում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և իր գործընկերների՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Քաղաքական երկխոսություն» ՀԿ-ների կողմից:

Սույն վեկույցը հրապարակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է հեղինակը և այն չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

Հապավումներ 2
Ամփոփագիր 3
Նախաբան և հետազոտության նպատակ 5
Հետազոտության արդյունքները 12
Ֆոկուս խմբային քննարկումների ամփոփում 12
Խորքային հարցազրույցների ամփոփում 19
Ֆերիկ եզդիական համայնք 26
Եզրակացություններ 28
Առաջարկություններ 30
Քաղաքացիական հասարակության և համայնքային կազմակերպություններին 30
Տեղական ինքնակառավարման մարմիններին 30
Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեին 30
ՀՀ ՏԿԵ նախարարությանը 31
ՀՀ Արդարադատության նախարարությանը 31
Ազգային ժողովին 31
Հանրային ֆինանսավորում ստացող կուսակցություններին 32
Կենտրոնական ընտրական հանձնաժողովին 32

Հապավումներ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ԱԺ - Ազգային ժողով
ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմիններ
ԱՓ - Ազգային փոքրամասնություն
ՀԿ - Հասարակական կազմակերպություն
ԹԻՀԿ - Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ՖԽՔ - Ֆոկուս խմբային քննարկում
ՁՈՒ - Զինված ուժեր
ՏԿԵ – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ամփոփագիր

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի հիմքում ընկած է 1996թ.-ին ընդունված Տեղական ինքնակառավարման մասին օրենքը: Միտված լինելով Հայաստանում ավելի ամուր և կայուն ժողովրդավարության կառուցմանը՝ ՏԻՄ համակարգի զարգացումը իր հերթական հանգրվանին է եկել 2015թ.-ին՝ համայնքների խոշորացման ծրագրի փորձարկմամբ: Այս ծրագրի իրականացումը պիտի հնարավորություն ստեղծեր ապակենտրոնացման և հավասարաչափ զարգացման, համայնքներում տրամադրվող ծառայությունների որակի բարձրացման և բնակչին ավելի հասանելի դարձնելու: Սակայն, ինչպես այդ գործընթացի մեկնարկին, այնպես էլ այսօր բնակչության մոտ առկա է մտավախություն՝ խոշորացվող համայնքների կենտրոն հանդիսացող բնակավայրում վարչական լծակների, տնտեսական հնարավորությունների և բարիքների կենտրոնացման:

Այս մտավախությունները կան՝ հաշվի առնելով համայնքներում 30 տարիների ընթացքում արմատացած կոռուպցիոն պրակտիկաները, համայնքների միջև պետական աջակցության բաշխման, ինչպես և սեփական նյութատեխնիկական հնարավորությունների անհավասարությունը:

Պատկերը ավելի է բարդանում, հաշվի առնելով, որ ՀՀ բնակչությունը, հիմնականում միատար լինելով, այնուամենայնիվ պարունակում է տարբեր ազգային, կրոնական փոքրամասնությունների խմբեր: Այս հետազոտությունը ուշադրությունը կենտրոնացրել է հենց ազգային փոքրամասնության խմբերի վրա: Դեռևս 1998-ին ուժի մեջ մտած Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին Շրջանակային համաձայնագրով ստանձնած պարտավորությունների համաձայն Հայաստանի Հանրապետությունը պիտի ապահովեր պայմաններ՝ ոչ միայն ամբողջական ներառման, այլև այդ խմբերի ինքնության պահպանման և զարգացման համար:

Հանրային կյանքում և մասնավորապես ՏԻՄ համակարգում ազգային փոքրամասնությունների ներգրավվածության հարցը Հայաստանում մինչ օրս մնում է թերի ուսումնասիրված, բացակայում են թե՛ պաշտոնական վիճակագրությունը, թե՛ սոցիոլոգիական տվյալները, որոնք թույլ կտային հստակ բնորոշել իրավիճակի զարգացման դինամիկան: Միևնույն ժամանակ, հասանելի տվյալները՝ ազգային փոքրամասնությունների պատկանող բնակչության թվի կրճատման, մայրենի լեզուների ուսումնառության հետ կապված խնդիրների, հենց ՏԻՄ մակարդակում ընտրովի պաշտոններում այդ խմբերի ներկայացուցիչների ցածր մասնակցության մասին, թույլ են տալիս պնդել, որ առկա է խնդիր: Այս խնդիրը երևում է նաև նրանում, թե ինչպես է ամբողջությամբ ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքները շրջանցում համայնքների խոշորացումը՝ հաշվի առնելով այդ համայնքների մտավախությունը, մյուս կողմից՝ չկարողանալով այդ համայնքների բնակչությանը առաջարկել հեռանկար, որում իրենց սոցիալական բարեկեցությունն և ինքնությունը հավասարապես չեն տուժի:

Արմավիրի մարզում եզդիներով խիտ բնակեցված խառը բնակչությամբ և գրեթե ամբողջությամբ եզդիներով բնակեցված համայնքների, եզդիական համայնքի ներկայացուցիչների և առավելապես հայերով բնակեցված համայնքների առկայությունը լավ հնարավորություն են ստեղծում այս խնդրի ուսումնասիրության համար:

Այս նպատակով իրականացված ուսումնասիրությունում կիրառվել է բնակչության շրջանում ֆոկուս խմբային քննարկումների և համայնքային պաշտոնյաների հետ խորքային հարցազրույցների մեթոդը: Այս մեթոդների համադրությունը թույլ է տվել նկարագրել բնակչության և համայնքապետարանների հարաբերվելու հիմնական ձևերը և դրա շուրջ առկա ընկալումները, խոշորացման վերաբերյալ ընկալումները, ազգային

փոքրամասնությունների՝ ՏԻՄ համակարգում ավելի մեծ ներգրավման վերաբերյալ հեռանկարները, ինչպես նաև առկա իրավիճակի և հեռանկարների վերաբերյալ պաշտոնյաների գնահատականները:
Ինչպես երևում է հարցազրույցներից Արմավիրի մարզում համայնքների խոշորացումը տեսանելի արդյունքներ է ունեցել բնակչության համար և ապացուցել է իր արդյունավետությունը վարչարարական տեսանկյունից: Այն դրական է գնահատվել թե բնակչության, թե պաշտոնյաների կողմից: Միաժամանակ ավագանու ինստիտուտը, չնայած համամասնական ընտրակարգի շնորհիվ ստացած առանցքային դերին, շարունակում է մնալ ոչ տեսանելի և ի զորու չէ իրականացնել իր վրա դրված ներկայացուցչական դերը: Համայնքապետարանի հետ հարաբերվելիս առավել ակտիվ բնակիչները հաճախ նախընտրում են ոչ ֆորմալ, բանավոր դիմումների կարգը, ինչը թվացյալ արդյունավետությանը զուգահեռ դարձնում է համայնքապետարանի հետ հարաբերությունները ոչ թափանցիկ և ստեղծում է կոռուպցիոն ռիսկեր:
Ինչ վերաբերվում է ազգային փոքրամասնություններին, ապա խնդիրը այնքանով է դուրս մղված հանրային դիսկուրսի դաշտից, որ առավելապես արհամարհվում է թե՛ բնակչության , ներառյալ՝ հենց ԱՓ խմբերից հարցվողներին), թե՛ պաշտոնյաների կողմից: Մայրենի լեզվի ուսուցումը, առավել ևս ՏԻՄ-ի հետ այդ լեզվով հարաբերվելու հնարավորությունը ընկալվում են որպես ոչ կարևոր, տարօրինակ: Ընտրովի կամ վարչական պաշտոններում ԱՓ ներկայացուցիչների ներգրավման հեռանկարը չնայած ստանում է ընդհանուր առմամբ չեզոք-դրական գնահատական, որոշ դեպքերում առաջացնում է նաև կտրուկ ընդդիմություն կամ «չեզոքացվում» ոչ ռելևանտ օրինակներով:
Ծրագրի շրջանակներում առաջարկություններ են մշակվել ուղղված տարբեր դերակատարներին. քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, գործադիր և օրենսդիր իշխանությանը, Վիճակագրական կոմիտեին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ժողովրդավարության զարգացման գործում առանցքային դեր ունեցող, բայց նույնպես կայացման փուլում գտնվող ինստիտուտին՝ կուսակցություններին:
Սույն հետազոտությունը փորձում է հասկանալ նոր և վերաձևավորվող տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի, ժողովրդավարության և մարդկանց տարբեր խմբերի, մասնավորապես՝ ազգային փոքրամասնությունների փոխազդեցությունը հասկանալու համար: Չհավակնելով խորը և ամփոփ էթնոգրաֆիկ, քաղաքական, տնտեսագիտական վերլուծություն ներկայացնել, այս հետազոտությունը ընդամենը հայացք է նետում այսօրվա Հայաստանում օրենսդրական դաշտի, իրավակիրառ պրակտիկայի, համայնքների բնակիչների և համայնքային պաշտոնյաների ընկալումների վրա: Նույնիսկ այս մակերեսային մակարդակում արված բացահայտումները կարող են հետաքրքիր լինել սոցիոլոգիական համայնքի, ՏԻՄ-ի և խտրականության դեմ պայքարի ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, պետական և տեղական մակարդակներում քաղաքականություն մշակողների և իրագործողների համար: Ավելին, իր, բավականին ակներև բացերով, այս տեքստը կարող է ուղղորդող դեր ունենալ ապագա հետազոտական աշխատանքների համար, ինչը կլինի թերևս դրա ամենամեծ ձեռքբերումը:

Նախաբան և հետազոտության նպատակ

Այս հետազոտության արդյունքներին ծանոթանալիս հարկ է հաշվի առնել երկու հանգամանք.

- 1996թ.-ից ՀՀ-ում ձևավորվող ՏԻՄ համակարգը իր պատմության ողջ գոյության ընթացքում տուժել է համայնքների սեփական բյուջեների սակավությունից և լիազորությունների սահմանափակությունից, ինչի պատճառով հաճախ դեր չի խաղացել հասարակության սոցիալ-քաղաքական կյանքում, իսկ ավագանու ինստիտուտը հաճախ գոյություն է ունեցել զուտ թղթի վրա: 2016 թ. սկսված և 2021-2022թթ.-ին արագացված ընթացք ստացած համայնքների խոշորացման և ՏԻՄ մակարդակում համամասնական ընտրակարգի ներմուծումը էական փոփոխությունների են ենթարկել համակարգը, կոտրելով 20 տարիների ընթացքում վատ կամ լավ հարաբերությունների ձևավորված մոդելները և դեռևս չունի վերջնականապես ձևավորված օրգանիկ հյուսվածքներ:
- Հայաստանի Հանրապետությունում անկախության տասնամյակներին, ինչպես և դրան նախորդող տասնամյակներում շարունակական է եղել բնակչության կազմում էթնիկ հայերի համամասնության աճը[1]: Զուգահեռաբար, ավանդապես ՀՀ տարածքում բնակվող և ՀՀ քաղաքացի դարձած ԱՓ ներկայացուցիչները դիսկուրսիվ առումով դուրս են մնացել ընդհանուր սոցիալ-մշակութային, սոցիալ-քաղաքական կյանքից, որոշակի աջակցություն և արտոնություններ ստանալով իրենց մշակութային կյանքի, ինքնության պահպանման հարցում: Այսպիսով՝ ԱՓ խմբերի ազդեցությունը և տեսանելիությունը բնակչության մեծամասնության, ինչպես նաև հենց այդ խմբերի ներկայացուցիչների համար դարձել է չնչին:

Հետազոտության նպատակն է, այս երկու էմպիրիկ ելման կետերը հաշվի առնելով, գնահատել խոշորացման արդյունքում ՏԻՄ աշխատանքների և կառավարման մասնակցայնության, արդյունավետության, թափանցիկության եւ հաշվետվողականության արդյունավետությունը և եզդիական, ասորական համայնքի ներկայացուցիչների ինքնության պահպանման, տեղական մակարդակում քաղաքական մասնակցության հետ կապված մարտահրավերները:

[1] Այս միտումը հնարավոր չէ իր ամբողջության մեջ նկատել ՀՀ Վիճակագրության կոմիտեի «Հայաստանում անցկացված մարդահամարների համառոտ պատմական ակնարկ» կոչվող, 2011թ. մարդահամարի կոնտեքստում պատրաստված տեքստում, սակայն պնդումը տեսանելի է դառնում բաց աղբյուրներում առկա և «WikiProject Armenia» նախաձեռնության կողմից ամփոփած տվյալներում՝ https://en.wikipedia.org/wiki/Census_in_Armenia

Ներածություն և իրավիճակի նկարագրություն

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մասին օրենքը ընդունվել է 1996թ-ին[2], 2002թ.-ից ուժի մեջ է մտել Տեղական Ինքնակառավարման Եվրոպական Խարտիան, իսկ 2013-ին Խարտիայի[3] լրացուցիչ արձանագրությունը[4], սակայն մինչ օրս ՏԻՄ համակարգը կայացման փուլում է: 2015թ. գործնականում մեկնարկել էր կառավարության պիլոտային ծրագիրը համայնքների խոշորացման մասին[5], որով նախատեսված առաջին քայլը Լոռու, Տավուշի և Սյունիքի մի քանի համայնքներում ձևական տեղական հանրաքվեների իրականացումն էր[6]: Այդուհանդերձ գործընթացը շարունակվում է մինչ օրս՝ մոտենալով իր հանգուցալուծմանը:
Խոշորացման գործընթացի հետ կապված կոռուպցիոն խնդիրների, համայնքների կոնկրետ փնջերի նախագծման անտրամաբանական, իսկ, երբեմն, քաղաքական նպատակահարմարությունից բխող հիմքերի բացասական ազդեցությունը հաշվի առնելով, այնուամենայնիվ հարկ է նշել, որ գործընթացը արձանագրել է բազմաթիվ դրական արդյունքներ:
Վերջնարդյունքում, համայնքների խոշորացման նպատակն է ունենալ ուժեղ ապակենտրոնացված համայնքներ, արդյունավետ կառավարում, համաչափ զարգացում եւ թափանցիկ, մասնակցային կառավարման ապահովում:
Խոշորացման ծրագրի հենց սկզբից և մինչ օրս քննարկվող հիմնական մտավախությունը առանձին բնակավայրերի և համայնքապետարանի, ավագանու հետ կապի ընդհատումն է: Այս հանգամանքը կարող է հանգեցնել ոչ միայն առօրյա խնդիրների նվազ արդյունավետ լուծմանը, այլ նաև սեփական կյանքի կազմակերպմանը վերաբերող հարցերում արդյունավետ մասնակցության նվազմանը: Այս մտավախությունը վերլուծելիս, սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել դրա ծագման ակունքները՝ ՏԻՄ ողջ համակարգում Հայաստանի Հանրապետական կուսակցության և կոալիցիոն գործընկերների մենաշնորհը, մեծամասնական ընտրակարգի պայմաններում անձնական գործոնների չբալանսավորվող ազդեցությունը և գյուղական համայնքներում առանձին ընտանիքների տասնամյակներով պահպանվող իշխանության իրականությունը:
2021թ.-ի աշնանը երեք փուլով իրականացված ընտրությունների արդյունքում ձևավորվեցին 45 խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններ: Գործընթացից անմաս չմնաց նաև Արմավիրի մարզը, որում ձևավորվեց 7 համայնք, որոնք միավորում էին Արմավիրի դեպքում 11, Վաղարշապատում՝ 2, Մեծամորում՝ 31, Բաղրամյանում՝ 14, Արաքս համայնքում՝ 13, Խոյ համայնքում՝ 17, Փարաքարում՝ 8 բնակավայրեր: Խոշորացումից դուրս մնաց Ֆերիկ գյուղը, որը Արմավիրի մարզում միակ ամբողջությամբ եզդիաբնակ բնակավայրն է:
ՀՀ-ում 2011 թվականին անցկացված մարդահամարի տվյալների համաձայն՝ Հայաստանում կան շուրջ 11 ազգային փոքրամասնություն կազմող էթնիկ խմբեր՝ 57 000 բնակչությամբ: Եզդիական համայնքը Հայաստանի ամենաբազմամարդ ազգային փոքրամասնությունն է

---

[2] ՏԻ մասին ՀՀ առաջին օրենքը, որը գործել է մինչև 2002թ.՝
https://www.arlis.am/documentview.aspx?docID=24486
[3] Տեղական Ինքնակառավարման Եվրոպական Խարտիան՝
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80563
[4] Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն՝
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85991
[5] Համայնքների միավորման հարցը կորոշվի տեղական հանրաքվեով՝
https://www.gov.am/am/news/item/11838/
[6] Համայնքների միացման վերաբերյալ տեղական հանրաքվեները խնդրահարույց են՝
https://medialab.am/13343/

35.272 (ոչ պաշտոնական տվյալներով՝ 45-50 հազար) բնակչությամբ: Հաշվի առնելով, որ Արմավիրի մարզում մեծ թիվ են կազմում եզդի ազգի ներկայացուցիչները, ովքեր մասնավորապես խիտ են բնակեցված Մեծամոր եւ Արմավիր խոշորացված համայնքներում, (ավելի քան 5.000 մարդ) որի մասին նշում է ազգությամբ եզդի իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանը՝ ունեն ինքնության պահպանման (լեզվական, մշակութային) եւ համայնքի կառավարման գործընթացում ցածր մասնակցայնություն (Մարդու իրավունքների եզդիական կենտրոն):

Հարկ է նշել, որ Արմավիրի մարզում խոշորացված համայնքներից միայն մեկում է, որ ավագանու կազմում ընդգրկված է եզդիական համայնքի ներկայացուցիչ:

Արմավիրի մարզի 7 համայնքներում ավագանու անդամների ընդհանուր թիվը կազմում է 160, որից միայն 1-ն է եզդիական համայնքից, երբ համայնքներ կան, որտեղ բնակչության 40%-ը եզդիական համայնքի ներկայացուցիչներն են:

Ըստ էության այս պատկերը կրկնվում է նաև ՀՀ այլ մարզերում. Լոռում չեն խոշորացվել Ֆիոլետովո մոլոկանական բնակավայրը, Կոտայքում՝ Արզնի ասորաբնակ բնակավայրը: Խոշորացումից դուրս մնացած այս բնակավայրերի բնակիչները և համայնքային իշխանությունները առավելապես դեմ են արտահայտվում հայաբնակ բնակավայրերի հետ խոշորացմանը՝ իրենց ազգային ինքնությունը կորցնելու, ասիմիլացվելու վտանգը որպես փաստարկ օգտագործելով: Ըստ էության Մեծամորի, ինչպես և Արարատ համայնքում ձևավորված ավագանիներում ԱՓ չնչին ներկայացվածությունը կամ իսպառ բացակայությունը որևէ կերպ չեն մեղմում այդ մտավախությունը: Հարկ է նշել, որ ուսումնասիրելով մինչև խոշորացումը Արմավիրի մարզի համայնքների ավագանիների կազմը մենք կարող էինք ավելի շատ տեսնել խառը բնակչությամբ համայնքներում ազգությամբ եզդի ավագանու անդամների:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության Շրջանակային համաձայնագիրը[7] ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 1-ից: Չնայած ՀՀ-ի կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների՝ ազգային փոքրամասնությունների խմբերը շարունակում են դուրս մնալ թե հասարակական քաղաքական կյանքից իր լայն իմաստով, թե պետական ծրագրերից, իսկ ինքնության պահպանման քաղաքականությունը, ըստ էության սկսվում և ավարտվում է սահմանափակ կրթական և մշակութային գործունեությամբ[8]:

Ինչ վերաբերում է Սահմանադրությամբ երաշխավորված ԱԺ-ում ԱՓ խմբերի 4 ներկայացուցիչներին հասանելիք մանդատներին[9], ապա մեխանիզմը, ըստ էության չի ապահովում ոչ ՀՀ կողմից ստանձնած իր պարտավորությունները, ոչ էլ բավարարում է մեխանիզմի անմիջական շահառուներին՝ ազգային փոքրամասնությունների խմբերին[10]:

Իրականացված հետազոտությունը փորձ է հասկանալու, թե որքանո՞վ է խոշորացումը նպաստում ՏԻՄ համակարգի կայացմանը, աշխատանքների թափանցիկության եւ արդյունավետությանը, ի՞նչ մարտահրավերներ է այն առաջ բերել, որքանո՞վ է խոշորացումը նպաստում համայնքներում միջմշակութային երկխոսությանն ու ազգային

---

[7] Շրջանակային կոնվենցիա Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178

[8] ADVISORY COMMITTEE ON THE FRAMEWORK CONVENTION FOR THE PROTECTION OF NATIONAL MINORITIES, https://rm.coe.int/16806f7f70?fbclid=IwAR03wF3B5DdGJXuCHZTVVxxMk4K0tNSINdO0OrVkHfT68kNGub9R2RCtPKQ

[9] ՀՀ Սահմանադրություն, Հոդված 89, մաս 2

[10] Եզդիների մասնակցությունը Հայաստանի քաղաքական կյանքին, Հայերեն և եզդիերեն լեզուներով գործող «Xiret Media»՝ https://www.youtube.com/watch?v=GqB0WvEPdCo

փոքրամասնությունների խմբերի ինքնության պահպանությանը, որքանո՞վ է խոշորացված համայնքի դեպքում հեշտ ազգային փոքրամասնությունների համար ներգրավվել ՏԻՄ աշխատանքներին: Արմավիրի մարզի բնակչության ազգային կազմը հաշվի առնելով հետազոտության թիրախում ազգային փոքրամասնությունների խմբերի հայտնվել էին եզդիական և ասորական համայնքները: Ի վերջո, այս հետազոտությունը հրավեր է՝ անդրադառնալ ազգային փոքրամասնությունների խմբերի հասարակական, քաղաքական կյանքին մասնակցության հարցին ոչ միայն պարտականությունների, այլև հնարավորությունների և Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների շահերի տեսանկյունից:

Արդեն զեկույցի պատրաստման փուլում ի հայտ եկավ հանգամանք, որը կարող էր իր ազդեցությունն ունենալ հարցվողների ընկալումների վրա և միանշանակ դեր է խաղում իրավիճակի նկարագրության և հետազոտության արդյունքների ճիշտ ըմբռնման համար: Հոկտեմբերի 26-ին դատարանը հետախուզում է հայտարարել և կալանավորելու որոշում է կայացրել եզդի իրավապաշտպան ՀՀ քաղաքացի Սաշիկ Սուլթանյանի հանդեպ, ում մեղադրանք է առաջադրված ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը), որով Հայաստանում ապրող եզդիների իրավունքների խախտումների մասին խոսելը, ըստ էության որակվել է որպես ազգային թշնամանքի հարուցում[11]:

[11] Դատարանը որոշեց իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ հետախուզում հայտարարել եւ կալանավորել, https://www.aravot.am/2022/10/26/1300427/

Մեթոդաբանություն

Զեկույցը ամփոփում է 6 ֆոկուս խմբային քննարկումներից և 7 խորքային հարցազրույցներից ստացված նյութը՝ Արմավիրի մարզում ՏԻՄ համակարգի և բնակիչների փոխազդեցության, հարաբերվելու փորձի, ՏԻՄ-երի կայացվածության, ինչպես նաև ԱՓ խմբերի՝ ՏԻՄ համակարգում ներգրավվածության առկա պատկերի և հնարավորությունների վերաբերյալ: Ֆոկուս խմբային քննարկումները (այսուհետ՝ ՖԽՔ) և խորքային հարցազրույցները իրականացվել են 2022 թվականի օգոստոսի 1 - սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Այս ընթացքում տեղի է ունեցել երկու իրադարձություն, որոնք կարող էին ազդել հարցվողների պատկերացումների վրա. սեպտեմբերի 12-13-ին իրականացված Ադրբեջանի ԶՈՒ-ի կողմից ՀՀ սուվերեն տարածքի հանդեպ ռազմական ագրեսիան և սեպտեմբերի 25-ին ի հեճուկս այդ ագրեսիայի իրականացված ՏԻՄ ընտրությունները: Չնայած երկու իրադարձություններից էլ Արմավիրի մարզը ուղղակիորեն, ուրեւէ հետեւանք չէր կրել, այնուամենայնիվ ուշադրության է արժանի, որ պատերազմական իրավիճակը չի հիշատակվել սեպտեմբերի 12-ից հետո տեղի ունեցած հարցազրույցներում, մինչդեռ ընտրությունների արդյունքում Ալագյազ համայնքի ղեկավարի պաշտոնում ազգությամբ եզդի երկու թեկնածուներից մեկի ընտրությունը հիշատակվել է գրեթե բոլոր խորքային հարցազրույցներում:

Ծրագրով նախատեսված հետազոտության նպատակն է՝ գնահատել խոշորացման արդյունքում ՏԻՄ աշխատանքների թափանցիկության եւ հաշվետվողականության արդյունավետությունը և եզդիական համայնքի ներկայացուցիչների ինքնության պահպանման, տեղական մակարդակում քաղաքական մասնակցության հետ կապված մարտահրավերները Արմավիրի մարզում: Ելնելով վերոնշյալ նպատակից և նախորդող ուսումնասիրությունների, հետազոտական բազայի բացակայության փաստից, այս տեսանկյունից, որոշում է կայացվել իրականացնել պիլոտային հետազոտություն՝ ֆոկուս խմբային քննարկումների և խորքային հարցազրույցների միջոցով, որը թույլ կտա ավելի լավ հասկանալ առկա իրական խնդիրների շրջանակը:

Նախատեսվում էր իրականացնել 6 ֆոկուս-խմբային քննարկում, անհրաժեշտության դեպքում, հետազոտական հարցերի բաց մնալու պարագայում ևս երկուսը ավելացնելու հնարավորությամբ:

- 3 ՖԽՔ՝ միայն կին մասնակիցների հետ, որոնցից 1-ը միայն ազգությամբ եզդի կանանց հետ, իսկ ևս 1-ը միայն երիտասարդ (մինչև 25 տարեկան) կանանց հետ,
- 3 ՖԽՔ՝ միայն տղամարդ մասնակիցների հետ, որոնցից 1-ը միայն ազգությամբ եզդի տղամարդկանց հետ, իսկ ևս 1-ը միայն երիտասարդ (մինչև 25 տարեկան) տղամարդկանց հետ:
- Էթնիկ կազմով խառը խմբերում նախատեսվում էր ունենալ ինչպես հայ, այնպես էլ ազգությամբ եզդի եւ ասորի մասնակից:

Հ/Հ	Թիրախային խումբ	Տարիք
1.	Կին	26-60
2.	Տղամարդ	26-60
3.	Երիտասարդներ (իգ. սեռ.)	18-25
4.	Երիտասարդներ (ար. սեռ.)	18-25
5.	Ասորիներ, եզդիներ (իգ սեռ)	18-60
6.	Ասորիներ, եզդիներ (ար. սեռ.)	18-60

Էթնիկ խառը կազմով կանանց և տղամարդկանց համար 2-ական ՖԽՔ իրականացնելիս նախատեսված էր ապահովել, որ խմբերից մեկում լինեն քաղաքային բնակավայր ունեցող Արմավիր, Մեծամոր, Էջմիածին համայնքների բնակիչներ, մյուսում՝ զուտ գյուղական բնակավայրերից բաղկացած Բաղրամյան, Արաքս, Փարաքար և Խոյ համայնքների:
Մինչդեռ հետազոտական թիմը մտավախություն ուներ եզդի կանանց բավարար ներկայացվածության հետ կապված, անբավարար մասնակցությունը արձանագրվել է ԱՓ խմբերից տղամարդ ներկայացուցիչների խմբից:
ՖԽՔ-ների մասնակիցների հավաքագրումը իրականացվել է համայնքներից հավաքագրողների օգնությամբ, հաջորդ քննարկումների համար՝ ձնագնդի մեթոդով: Ժամանակային սահմանափակումների, ինչպես և հավաքագրման սահմանափակ հնարավորությունների արդյունքում որոշ խմբերում ի հայտ է եկել գյուղական բնակավայրերի մանկավարժների կողմից՝ ծնողական համայնքի կարծիքը ձևավորելու երևույթը:
ՖԽՔ-ներին ընդհանուր մասնակցել է Արմավիրի մարզի 42 բնակիչ, որոնցից մինչև 25 տարիքային խմբից 10 կին և 4 տղամարդ, իսկ 25-ից բարձր տարիքային խմբում 23 կին և ընդամենը 5 տղամարդ: Ազգային փոքրամասնությունների ներկայացված են եղել միայն ասորի և եզդի մասնակիցներով:

#	Activity	Project location		Nationality	Means of Verification	Beneficiaries						
		Region	Community			Girl	Boy	Total	Woman	Man	Total	Grand Total
1	Ֆոկուսխմբային քննարկում	Արմավիր	Արմավիր	Հայ	Գրանցման թերթիկ				8		8	8
2	Ֆոկուսխմբային քննարկում	Արմավիր	Մեծամոր, Արմավիր, Բաղրամյան	Հայ	Գրանցման թերթիկ	7		7			0	7
3	Ֆոկուսխմբային քննարկում	Արմավիր	Խոյ, Մեծամոր	Եզդի	Գրանցման թերթիկ					5	5	5
4	Ֆոկուսխմբային քննարկում	Արմավիր	Արաքս, Մեծամոր, Փարաքար	Ասորի, եզդի	Գրանցման թերթիկ	3	4	7			0	7
5	Ֆոկուսխմբային քննարկում	Արմավիր	Մեծամոր	Ասորի	Գրանցման թերթիկ				8		8	8
6	Ֆոկուսխմբային քննարկում	Արմավիր	Արմավիր	Եզդի	Գրանցման թերթիկ			0	7		7	7
					Ընդամենը	10	4	14	23	5	28	42

Խորքային հարցազրույցների իրականացման համար հրավիրվել են 6 խոշորացված համայնքների և Ֆերիկ համայնքի ղեկավարները, ապա տեղակալները, աշխատակազմի քարտուղարները: Հաջողվել է հարցազրույց իրականացնել 3 համայնքների ղեկավարների և 3 տեղակալների հետ, Ֆերիկ համայնքից ներկայացուցչի հետ հարցազրույց հաջողվեց իրականացնել զգալիորեն ավելի ուշ, ինչի պատճառով դրան անդրադարձել ենք առանձին:
Խորքային հարցազրույցներում առավելապես ներկայացված են տղամարդ հարցվողների ընկալումները, հետազոտող թիմին պայմանավորվածություն չի հաջողվել ձեռք բերել Վաղարշապատի համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի հետ, իսկ երկրորդական օղակում նույնպես կտրուկ ավելի քիչ ներկայացված կանանցից[12] հրավերին արձագանքել է միայն Ֆերիկ համայնքի ղեկավարի տեղակալը, ում հետ հարցազրույցը ներկայացված է առանձին:

[12] Դատելով ուսումնասիրվող համայքնների կայքերում ներկայացված տեղեկատվությունից, այս համայնքներում 14 տեղակալներից միայն Ֆերիկ համայնքում է այդ պաշտոնը զբեղցնում կին, աշխատակազմի քարտուղարի պաշտոնը կանայք զբաղեցնում են միայն Փարաքարում և Արաքսում: Խոյ համայնքի ինտերնետային կայքը չի գործում:

Թե ՖԽՔ-ների, թե խորքային հարցազրույցների ուղեցույց-հարցաշարերը կառուցված են այնպես, որ թույլ տան հարցվողների անմիջական փորձի կամ անմիջական շրջապատի փորձի մասին խոսելուց, ՏԻՄ-ի հետ առնչությունը նկարագրելուց անցնել համակարգի ընթացող տրանսֆորմացիայի վերաբերյալ դատողությունների, այնուհետև մոդելավորել հիպոթետիկ իրավիճակ, որը ամբողջությամբ հնարավոր է ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում, սակայն բացակայում է ՏԻՄ համակարգի պրակտիկայում:

Հետազոտության արդյունքները
Ֆոկուս խմբային քննարկումների ամփոփում

Տեղական ինքնակառավարման մարմինների հետ առնչությունը նկարագրելով ֆոկուս-խմբերի մասնակիցները նկարագրել են որպես ուղղահայաց հարաբերություններ՝ *համայնքապետարանից* որևէ ծառայություն կամ աջակցություն ստանալու փորձ: Հատկանշական է, որ մասնակիցների կողմից չեն շոշափվել հանրային մասնակցության այնպիսի ձևերը, ինչպես հանրային լսումներն են կամ ավագանու նիստերին մասնակցությունը: Ըստ էության, չնայած ՏԻՄ-ը բաղկացած է ավագանու և համայնքի ղեկավարի ինստիտուտներից, միայն վերջինիս ձեռքում կենտրոնացած վարչական ապարատն է առավելապես տեսանելի եղել մասնակիցների համար, անկախ իրենց սեռից, տարիքից և ազգային պատկանելությունից: Բնակիչների հետ առավել ինտենսիվ կապի օղակ է ընկալվում ոչ թե առաջնային մանդատ ստացող ավագանին, այլ համայնքի ղեկավարի կողմից նշանակվող բնակավայրի վարչական ղեկավարը, ում միջին և բարձր տարիքային խմբի մասնակիցները շարունակում են անվանել «մեր համայնքի ղեկավարը, մեր գյուղապետը»: Վերաբերմունքը տարբերվում է, երբ բնակավայրի վարչական ղեկավար նշանակված է ոչ թե տեղացին, այլ ուրիշ բնակավայրի բնակիչը:

«Այսինքն համայնքապետը, վարչական ղեկավարը, ինքը մեկ հետ շատ սերտ կապի մեջ է ու ամեն անգամ երբ գալիս է մեկ առաջնահերթ հուզող հարցերով նրան ենք դիմում: Այսինքն մեր այդ դիմումը մենք օֆիցիալ չենք դիմում իրեն... ...ինքը նախկին մեր աշխատակիցն է եղել, մենք ավելի ջերմ ենք ու հենց այսպես ասում ենք»
Ասորի կին

«Նշանակեցին ժամանակավոր պաշտոնակատար Մեծամորից, մի կին էին <u>ուղարկել</u>, որին ես առիթ չեմ ունեցել տեսնելու ճանաչելու:»
Եզդի տղամարդ

Միևնույն բնակավայրից նշանակված կամ *ուղարկված* վարչական ղեկավարի տարբերության ևս մի շերտ է ավելանում մասնավորապես եզդիական համայնքի ներկայացուցիչների մոտ: Այս մասնակիցների մոտ քննարկման այս կամ այլ փուլում ձևավորվում է ամբիվալենտ պնդում. ՏԻՄ-ին առնչվող հարցերում չկա որևէ ազգային խտրականություն և կապ չունի, թե ինչ ազգի է իր գործը լավ կատարող պաշտոնյան, այնուամենայնիվ, եթե *գոնե որոշ գյուղերում* վարչական ղեկավարը լիներ եզդի, դա թույլ կտար ավելի լավ հասկանալ որոշ խնդիրներ, ավելի սրտացավ լինել, թույլ կտար ավելի հեշտ դիմել իրեն:

«Իսկ ՏԻՄ-երում բացարձակ էական չի կա եզդի, թե չկա: Դա այն տեղը չի, որ կարա գործառույթ անի, որը ազդի համայնքի խնդիրների լուծման վրա: Այս պահին, եթե ես խնդիր ունեմ, կապ չունի ես եզդի եմ, թե հայ՝ ՏԻՄ-ի մակարդակով եմ ասում, դա ինչ կապ ունի իմ ազգային պատկանելիությունը, եթե դա ՏԻՄ-ի մակարդակով լուծելու հարց է... »
«... Ինձ թվում ա դա պետք է օրենքի պահանջով լինի: Օրինակ օրենքի պահանջ դրվի որոշակի կառույցներում, որ պարտադիր այս-այս ազգի ներկայացուցիչներ լինեն:»
Երկու պնդումներն էլ պատկանում են միևնույն եզդի տղամարդուն

Ակներև է ՏԻՄ-ի հետ հարաբերվելու փորձառության թեմատիկ տարբերությունը կախված մասնակիցների սեռից և տարիքից: Սեփական փորձից կամ բարեկամական, ընկերական անմիջական շրջապատի մասին պատմելիս տղամարդիկ և համեմատաբար բարձր տարիքի կանայք ընկալվում եմ որպես հստակ ծառայություններ հայցող. տեղեկանքների, սոցիալական աջակցության, մանկապարտեզի կամ դպրոցի հետ կապված հարցերի շահառուներ: Մինչև 25 տարեկան երկու սեռերի մասնակիցներն ու համեմատաբար երիտասարդ կանայք, որպես ՏԻՄ-ի հետ հարաբերվելու փորձ առաջնային հիշատակում են անձնական կամ կոլեկտիվ սոցիալական, մշակութային, կրթական նախաձեռնությունների համար հայցվող աջակցությունը:
Չնայած որ խոսքը հիմնականում գնում է անձնական փորձառության մասին, երիտասարդ մասնակիցները ավելի հակված են հաճախ օգտագործել «մենք» դերանունը, նկատի ունենալով համայնքի կոլեկտիվ շահերը և կոլեկտիվ պատասխանատվությունը: Միաժամանակ, թե սեփական փորձը նկարագրելիս, թե հիպոթետիկ իրավիճակներ պատկերացնելով երիտասարդներից շատերը ավելի դյուրին են պատկերացնում անմիջապես համայնքի ղեկավարների, ոչ թե վարչական ղեկավարների կամ աշխատակազմի միջոցով համայնքային իշխանության հետ հարաբերվելը: Ավելին, ավագանու անդամի միջոցով ՏԻՄ-ի հետ հարաբերվելը դիտարկվում է որպես անտեղի միջնորդավորված մեխանիզմ:

Դե կան մարդիկ, ովքեր դիմում են իրենց ծանոթին, ծանոթն էլ ավագանու իր ծանոթին ու այդպես անում են իրանց գործը: Իսկ ես այն մարդկանցից եմ, ով դիմում է հենց այն մարդուն, ով կարող է ինձ օգնել:
Երիտասարդ հայ կին

Երիտասարդ մասնակիցների մոտ, ում համար 2021թ. ընտրությունները, ըստ էության առաջին ՏԻՄ ընտրություններն էին, ավագանու ինստիտուտի հանդեպ ունեն անորոշ ակնկալիքներ,սակայն իմանում են, թե ով է «իրենց մոտից», հակված են բնութագրել ավագանին որպես աշխատող թիմ՝ նույնիսկ չունենալով համագործակցելու սեփական փորձառությունը: Փոխարենը, մեծամասնական ՏԻՄ ընտրությունների փորձառությունը կրող մասնակիցները ավելի են դժվարանում հասկանալ այժմյան ավագանու դերը և ձևավորվելու կարգը: Առաջին պլան է ելնում սեփական չներկայացվածության զգացողությունը՝ նույնիսկ համայնքապետարանից գոհունակություն հայտնելու դեպքում:

«Չէ, հիմա չունենք [ավագանիում ներկայացուցիչ] :Հիմա շատ է խառնվել իրար:»
Ասորի կին
«Մեր համայնքից ավագանու անդամ չունենք, ու շատ լավ կլիներ, որ օրենքը պահանջ դներ, որ ցանկացած այդ համայնքի ամեն մի վարչական համայնքից լիներ ավագանու ներկայացուցիչ:»
Եկդի տղամարդ

Չներկայացվածության զգացողության արտահայտմանը զուգահեռ, խոշորացման գործընթացը քննարկելիս, ըստ էության բոլոր խմբերը տվել են դրական գնահատականներ:

Մի կողմից՝ բյուջեի կենտրոնացում, առաջնահերթ խնդիրների լուծում, վարչարարության խնայողություն, մյուս կողմից էլ անձնական փորձի վրա հիմնվող՝ բնակավայրի կոյուղին, ջրամատակարարումը, ճանապարհը: Ըստ էության բոլոր դրական հատկանիշները վերաբերվում էին կոմունալ ծառայությունների կամ վարչարարության արդյունավետությանը: Միաժամանակ բոլոր խմբերում էլ եղել են ձայներ, որոնք արտահայտում էին չեզոք կամ քննադատող կարծիք, որը սակայն լռեցվում էր մյուս մասնակիցների կողմից:

Հայ կին. «Մի քիչ փոշին է շատացել: Փոշին է ահավոր:»
Հայ կին. «Ոչինչ լավ բանի համար է:»

Ասորի երիտասարդ կին. «Ինձ թվում է, ոնց առաջ էր, այդպես էլ հիմա է ու բան չի փոխվել:»
Ասորի երիտասարդ տղամարդ. «Դե չէ, ես համաձայն չեմ:»

Ինչ վերաբերվում է համամասնական ընտրակարգին և համայնքի ղեկավարի կուսակցական պատկանելությանը, հիմնականում մասնակիցները, որպես առաջնային գործոն նշում են համայնքի ղեկավարի անձը, անձնական հատկանիշները: Բացառությամբ անձամբ ՏԻՄ-ի հետ որևէ նախաձեռնություններ իրականացնող մասնակիցներից, մյուս մասնակիցները, որպես առաջին պատասխան համոզված չեն լինում կամ ընդհանրապես չեն կարող նշել թե որ կուսակցության ներկայացուցիչն է համայնքի ղեկավարը (բացառությամբ Արմավիր համայնքի բնակիչների): Մինչդեռ մեկ- երկու արձագանքներից հետո մասնակիցները տրամաբանելով «հիշում են» կուսակցությունը, առավել երկար այդ գործընթացը տևեց ազգությամբ եզդի և ասորի կանանց մասնակցությամբ խմբերից մեկում, որին մասնակցում էին միայն գյուղական բնակավայրերից անձինք:

«Ոչ ձայն ենք տվել, ոչ էլ գիտենք:»
Եզդի կին
«Ես էլ եմ գոհ, մենք չենք խառնվում այդպիսի գործերի, տղամարդիկ են անում ամեն ինչ:»
Եզդի կին
«Մեր տղամարդիկ մեզ թույլ չեն տալիս, որ ամեն հարցի խառնվենք կամ իմանանք, կամ հարցնենք: Որ հարցնում ենք, ասում են դուք գործ չունեք: Մենք էդպիսի բաներից հեռու ենք:»

Բոլոր ՖԽՔ-ներում այն մասնակիցները, որոնք ունեցել էին ՏԻՄ-ին որևէ խնդրով դիմելու փորձառություն, անկախ դրա բնույթից (լինի դա որևէ տեղեկանք կամ անձնական նյութական աջակցություն, թե աջակցություն որևէ նախաձեռնությանը), հակված են ձևակերպել իրենց դիմումը բանավոր, գրավոր ձևաչափը ընկալելով միայն որպես լրացուցիչ, ոչ անհրաժեշտ, երբեմն անխուսափելի գործիք: Մի կողմից այս անմիջականությունը դրական և արդյունավետ է գնահատվում բոլորի կողմից, սակայն միևնույն ժամանակ այն նպաստում է անձնավորված փոխհարաբերությունների հարթության պահպանմանը, որում կամայականորեն արհամարհվել են թե քաղաքացիների խնդիրները, թե համայնքների զարգացման համակարգային խնդիրները:

«Սկզբից վախենում ես, թե ոնց պետք է դիմում գրես: Ու էդպես հետո դառնում է սովորական էլի: Նենց վախենալու բան չկա, որ խառնվում էիր իրար: Ես այդպիսի բաների միջով չէի անցել:»
Եզդի կին

Գրավոր մենք դիմում ենք խոշորացված համայնքի համայնքապետին: Չեմ հիշում ինչու, բայց տարբեր հարցերով մենք դիմում ենք...
(Ի հակադրություն վարչական ղեկավարին բանավոր դիմումների)
Հայ կին

Մեկ ամիս առաջ կրկին ժողով գնաց Աղավնատուն գյուղում, նորից հավաքվել էինք, նորից հարցը բարձրաձայնեցի, ասեցին չենք մոռացել: Ասեցի ուղղակի ևս մեկ անգամ բարձրաձայնում եմ:
Դե գիտեք արդեն 30 տարիա գրավոր ենք տվել, հոգնել ենք գրավոր տալուց:
Եզդի տղամարդ

Բանավոր դիմումների և միայն ըստ անհրաժեշտության, համայնքապետարանի ներկայացուցիչների աջակցությամբ, գրավոր դիմումների ներկայացումը առավելապես հանել է դիմումի ընթացակարգի, գրագետ կազմման և օգտագործվող լեզվի հարցերը: Այնուամենայնիվ, այս հարցը հետաքրքիր երանգավորում է ստացել խորքային հարցազրույցների փուլում, որոնք ներկայացված են հաջորդ բաժնում: Քննարկումների մասնակիցները հիմնականում հակված են եղել արդարացնել «օգնությամբ» գրավոր դիմումների պրակտիկան՝ հիմնավորելով այն այլ բնակիչների ենթադրյալ ոչ բավարար գրագիտությամբ: Ուշագրավ էր նաև ԱՓ մասնակիցների նախահարձակ պնդումը, թե բանավոր, թե գրավոր հայերեն դիմելու վերաբերյալ:

«Դա հայերեն էր, բայց չէ մենք հայերեն գիտենք: Ընդհակառակ ես եզդիերեն տառերը չգիտեմ...»
«Չէ մեր լեզվով չեմ կարողանում գրել, ոչ էլ ուզում եմ գրել...»
«Դե ծնվել ենք հայերենն է ու մինչև հիմա էլ հայերեն է...»
Եզդի կանայք

«Բնականաբար, եթե այստեղ ենք ապրում՝ հայերեն, օրինակ եթե ՌԴ-ում ՀՀ քաղաքացին ինչ-որ հիմնարկ դիմի, հո չի գնա հայերեն գրի, բնականաբար կգնա ռուսերեն կգրի: Իրավական առումով այն լեզվով պետք ա գրվի, որտեղ որ ապրում ես:»
Եզդի տղամարդ

Մեր մեծերը դպրոցում չեն սովորել ասորերեն գրել, բայց կարծում եմ երբեք խնդիրներ չեն առաջացել:
Ասորի երիտասարդ տղամարդ

ՏԻՄ համակարգում ավելի մեծ մասնակցայնությանը, համակարգի բարեփոխմանն ուղղված քայլերի անհրաժեշտությունը քննարկելիս մասնակիցները լակոնիկ էին, սահմանափակվում էին իրազեկման, հանրակրթության որակի բարելավման և իրավագիտակցության զարգացման անհրաժեշտությամբ: Ուշադրության է արժանի միայն այն հանգամանքը, որ ինչպես և ընդհանուր առմամբ ՏԻՄ-ի հետ հարաբերվելու փորձը նկարագրելիս, առավել զուսպ էին տղամարդկանց և տարիքով ավագ կանանց խմբերը, առավել ակտիվ էին այդ ընդհանրական առաջարկություններն անում երիտասարդ կին մասնակիցները:
Այնուամենայնիվ անկախ հարաբերվելու փորձից և առաջարկություններ անելու պատրաստակամությունից, մասնակիցների բացարձակ մեծամասնությունը նշում էր, որ չի դիտարկում ՏԻՄ համակարգում իր ներգրավումը կամ աշխատանքը որպես ցանկալի հեռանկար: Ըստ էության ՖԽՔ-ների միակ մասնակիցը, ով հայտնում էր ավագանիում իր ներգրավվածության պատրաստակամության մասին կուսակցական եզդի տղամարդն էր, ով եղել է թեկնածու նախորդ ընտրություններին, չի ընդգրկվել ավագանու կազմում, սակայն հանդես էր գալիս որպես կուսակցական:
ՏԻՄ-ում չներգրավվելը հիմնավորելու համար օգտագործում էին երեք հիմնական բացատրությունները. հետաքրքրության բացակայությունը, քաղաքականության բարդ լինելը և, մասնավորապես եզդի կանանց դեպքում, այդ դերի անհամատեղելիությունը կնոջ սոցիալական դերի հետ: Հատկանշական է, որ խմբերից մեկում նման թեզը աջակցեցին նաև ազգությամբ հայ կանայք:

«Չէ դե կին արմատն էլ կարող է գործ անել, բայց դե գյուղի համար չէ:»
Եզդի կին
«Մենք ազգությամբ եզդի ենք, երբեմն մեր արմատներից եկածն էլ մի քիչ պետք է պաշտպանենք:»
Եզդի կին
«Ես էլ կարծում եմ, կապ չունի, թե ազգությամբ ինչ ենք, ես էլ չէի ցանկանա, որ իմ աղջիկը ավագանու անդամ լիներ: Ես մասնագիտությամբ բժիշկ կոսմետոլոգ եմ, աշխատել եմ, բայց հիմա չէ... Ինքն էլ կուզենամ, որ ինքն էլ լավ գործ ունենա, բայց հաստատ ավագանու մեջ չեմ տեսնում իրան: Կապ չունի ազգություն կամ ինչ որ մտածելակերպ:»
Հայ կին

Որոշակի օրինաչափություն է նկատվում նրանում, թե ինչպես են քննարկվում ՏԻՄ համակարգում ԱՓ-ների դերի ավելացման, ավագանու կամ համայնքի ղեկավարի դերում ընտրվելու հեռանկարները: Միայն հայ մասնակիցներով երկու խմբերում էլ հնչում էին կարծիքներ, որոնք արժեզրկում էին ԱՓ-ների դերի ավելացումը կամ մերժում դրա անհրաժեշտությունը:

«Խի եթե մեր հայը կարա անի, խի գա եզդի նստի, խի ինչի՞ համար:»
Հայ կին

Այնուամենայնիվ, նաև այս երկու խմբերում գերակշռել է իրավունքահենք մոտեցումը. քաղաքացի են, հետևաբար կարող են: Այս թեզի էմոցիոնալ առավել ընկալելի և կոնսենսուսային հիմնավորումը ՀՀ ԶՈՒ-ում ԱՓ պատկանող քաղաքացիների ծառայություն անցնելն է: Քաղաքացիության և զինապարտության այս ընկալումները միաժամանակ արխայիկ են և ազդեցիկ:
Միաժամանակ հարկ է նշել, որ ազգային փոքրամասնությունների ԶՈՒ-ում ծառայելու հանգամանքը ընդհանրապես չի քննարկվել տղամարդ մասնակիցների կողմից:

«Իրանք մեր վինվորի կողքին կանգնեցին կռիվ տվեցին...»
«Դե ոնց այլապգի համարվի, մեր բանակում են ծառայում:»
Երկու հայ կանայք

«Ու եթե իրենց ներկայացուցիչները բանակում ծառայում են, ինչու չպետք է ներգրավվեն պետական կառավարման համակարգում:»
Հայ երիտասարդ կին

Հատկանշական է, որ նման կարծիք չի արտահայտվել այն խմբերում, որոնցում եղել են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Փոխարենը հնչում էին որակավորման, կրթական ցենզի պահանջներ, որոնք կարող են վերաբերելի լինել համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի անկախ իր ազգային պատկանելությունից, սակայն նախատեսված չեն ՀՀ օրենսդրության տեսանկյունից: Այնուամենայնիվ, համաձայնվելով, որ ԱՓ-ն կարող է զբաղեցնել ընտրովի պաշտոն ՏԻՄ համակարգում, մասնակիցները քիչ անց արտահայտում էին մտքեր, որոնցից հետևում է, որ խոսքը գնում է ավելի շատ նշանակվող պաշտոնի մասին:

«Ես ճիշտն ասած կքննարկեի ժամանակավոր պաշտոնակատարի դեպքում իրա դրսևորումը, այսինքն որ լինի ժամանակավոր պաշտոնակատար ու իրա քայլերը, ու իրա վերաբերմունքն ու մտածելակերպը աշխատանքում, բնակչին, երկրին: Դա շատ կարևոր է: Կտայի հնարավորություն, որպեսզի ստուգեի համոզվեի, որ արդյոք այդ գաղափարները, որը ինքը ներկայացնում է, արդյոք կիրառում է ու կկատարի իր գաղափարները: Նոր այդ դեպքում ես համաձայնությունս կտայի, որ ինքը կառավարեր:»
Հայ կին
«Դե լավ կլիներ, որ եզդի համայնքից լիներ, քանի որ մեր համայնքում էլ համամասնությունը 40-60 է, մի ժամանակ 50-50 էր, բայց շատերը դուրս են եկել: Ցանկալի կլիներ, որ հենց եզդիական համայնքից մենք ունենայինք վարչական ղեկավար:»
Եզդի տղամարդ

Եզդի տղամարդ. «Տեսականորեն կարող է:»
Երիտասարդ եզդի տղամարդ. «Այո, իհարկե տեսականորեն:»

Քննարկելով, թե որ ազգերի ներկայացուցիչներին են պատկերացրել մասնակիցները, պարզ էր դառնում, որ խոսքը գնում է առավելապես եզդիների մասին: Ռուսների վերաբերյալ կարծ

քննարկում տեղի ունեցավ խմբերից երկուսում՝ ընդ որում, մասնակիցները բացասաբար խոսում էին առաջին հերթին երկրի, ապա համայնքի հիպոթետիկ «նշանակված ղեկավարի», չքննարկելով Հայաստանում ավանդապես բնակվող ռուս մոլոկանական համայնքը: Խիստ մերժողականությամբ գրեթե բոլոր խմբերում քննարկվել է ազգությամբ թուրք համայնքի ղեկավար ունենալու անհնարինությունը:
Ուշագրավ է եղել ՀՀ-ում ավանդապես բնակվող ասորական փոքրամասնության մասին մասնակիցների խոսքը. մի կողմից ներկայացվածությունը փաստացի անբավարար է, մյուս կողմից ասորական համայնքը ընկալվում է թե հայ, թե ասորի մասնակիցների կողմից այնքան ինտեգրված, ակտիվ, բարձր պաշտոններ զբաղեցնող, որ խնդիրը կարծես թե բացակայում է:

«Համեմատած եզդիների, ասորիները ավելի են հայացել, այսպես ասած, դրա համար, որպես այդպիսին խնդիրներ չունենք: Վայ այս ազգի հետ կապված ինչ-որ խնդիր կա ու պետք է լուծում տալ, չէ այդպիսի խնդիրներ չի լինում:»
Ասորի երիտասարդ տղամարդ

«Ասորական համայնքի մասով ասեմ, որ ասորիները մի քիչ ավելի ակտիվ են: Եզդիական համայնքը մի քիչ իրանց ավանդույթներով պայմանավորված, չի թողում մի քիչ, որ իրանք ավելի առաջ գնան:»
Հայ կին

Ուշագրավ է եզդի համայնքի ղեկավար ունենալը «արտոնող» փաստարկներից մեկը, որը իր բնույթով մերժում է եզդի ինքնության ամբողջությունը, դարձնելով այն զուտ կենցաղային և ավանդութային, այն է «եզդիները նույն հայերն են», որը համառորեն կրկնում էին երկու խմբերին մասնակցող երկու հայ կանայք:
Բավականին միանշանակ է ՖԽՔ-ների մասնակիցների ընկալումը, թե որն է «այլ կրոնը», երբ խոսքը գնում է հիպոթետիկ համայնքի ղեկավարի դավանանքի մասին. իսլամ դավանող համայնքի ղեկավարը սպառնալիք է համայնքի համար: Այս առաջնային արձագանքից անդին, որոշակի զգուշավորությամբ ոչ կոնկրետ «այլ կրոն» դավանելը չի դիտարկվում որպես խոչընդոտող հանգամանք: Միաժամանակ որոշ խմբերում ավելի կտրուկ արտահայտվող կարծիքի համաձայն համայնքի ղեկավարը Հայաստանում պիտի լինի «հայ քրիստոնյա»: Որպես «այլ» կրոն իսլամը հիշատակելով և քրիստոնեությանը նախապատվություն տալով մասնակիցների խոսքը շրջանցում է ՀՀ-ում բնակվող քրիստոնեության տարբեր ուղղությունների բազմազանությունը՝ մոլոկանությունից մինչև ավետարանչականություն, ասորիների առանձին ավանդական եկեղեցու և եզիդիզմի առկայությունը, որպես ՀՀ տարածքում ավանդապես տարածված կրոնական համոզմունքներ:

«Դե որովհետև հայերը առաջինն են Քրիստոնեությունը պետական կրոն ընդունել, պետք է հենց հայ քրիստոնյա լինի իմ կարծիքով:»
«Նա մեկ էլ կտրականապես վերացրեց:»
Ասորի երիտասարդ կնոջ պնդում (առաջին մեջբերում), ասորի երիտասարդ տղամարդու կարճ արձագանք (երկրորդ մեջբերում)

Հատկանշական է, որ անկախ մասնակիցների ազգությունից և սեռից որպես մեծ նարատիվ վերարտադրվել է Հայաստանի առաջին քրիստոնյա պետություն լինելու դրույթը և (կրոնի հետ փոխկապակցված) ազգապահպանության անհրաժեշտությունը:

«Կարող է ելնելով իր շահերից, ստիպի որ իրենց կրոնը դավանեն: Քրիստոնեությունը չպետք է կորցնի իր արժեքը կարծում եմ:»
Հայ կին

Խորքային հարցազրույցները իրականացվել են 3 համայնքների ղեկավարների և 3 համայնքի ղեկավարի տեղակալների հետ: Չնայած հետազոտող թիմի գործադրած ջանքերին, այս հարցազրույցները ոչ թե անձանց փորձառությունից բխող իրենց ընկալումներից և պրակտիկայից բխող իրողության մասին են, այլ հարցազրույցներ են պաշտոնյաների հետ, որոնք փորձում են տալ «ի պաշտոնե ճիշտ» պատասխանը: Հարցազրույցները բաղկացած են երկու մասից. հարցվողի փորձառության, ՏԻՄ-ի շուրջ պատկերացումների և խոշորացման արդյունքում վերափոխման մասին և ՏԻՄ համակարգում ազգային փոքրամասնությունների մասնակցության մասին:
Մինչև տվյալ պաշտոնում լիազորությունների կատարմանը անցնելը հարցվողների փորձառությունը կարելի է պայմանականորեն դասել երկու տեսակի. համակարգում աշխատանքի, պաշտոնյայի ճանապարհ և քաղաքացիական-քաղաքական, քննադատից՝ իրականացնողի վերափոխման ճանապարհ: Փորձառության այս տարբերությունը միշտ չէ, որ արտացոլվում է հարցվողների այսօրվա ընկալումներում կամ գործունեության վրա:
Այնուամենայնիվ, մինչև համայնքների խոշորացումը և դրանից հետո ՏԻՄ ոլորտի փոփոխությունը քննարկելով նկատելի է, որ «համակարգի» միջից եկած հարցվողները առաջին հերթին և առավելապես քննարկում են համայնքների բյուջեի, կառավարելիության, վարչարարության հարցը, ընդգծում արդյունավետությունը և փոքր բնակավայրերում կոնկրետ սոցիալական փոփոխություններ իրականացնելու հնարավորությունը: Քաղաքացիական-քաղաքական ճանապարհով ՏԻՄ համակարգում հայտնված պաշտոնյաները, թերևս նույնպես կրկնելով այդ պնդումը, ավելի մեծ ուշադրություն են դարձնում ընտրակարգի փոփոխության, մշակութային մարտահրավերների (քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև) և քաղաքական պատասխանատվության կոմպոնենտների վրա:

«...եթե նախկինում մարդիկ, մանավանդ ավագանու մասով ընտրել են խիստ անհատների, խոսքը 2016-ի և դրանից առաջ եղած ավագանու ընտրությունների մասին ա, ապա 2021 թվականի նոր ընտրակարգով ընտրությունները իրանք ամբողջովին քաղաքական ընտրություններ են: Եվ հետևաբար ընտրություններում էդպիսով ավելի ընդգծվել և կարևորվել ա ավագանու դերը: Ես 2016 թվականի ընտրված ավագանու և 21 թվականի ընտրված ավագանու մասով էս տարբերությունները ակնհայտ տեսնում եմ:»
Համայնքի ղեկավար
«...հիմա արդեն մենք կարողանում ենք 1 կետից կառավարել թե՛ բյուջեն, թե՛ համակարգը ընդհանուր, կոնկրետ գյուղերում, որ խնդիրը, որ կա, արդեն կարելի ա լուծել, այսինքն խոշորացումը, իմ կարծիքով, շատ լավ գործընթաց էր, որն իրականացավ»
Համայնքի ղեկավարի տեղակալ

հարցվողների մոտ: Կուսակցական գործիչները խոսում են անձնային գործոնի մասին որպես «դեռևս» ավելի կարևոր, իսկ կուսակցության գործոնի մասին խոսելով (ըստ էության Քաղաքացիական պայմանագիր կուսակցության մասին խոսելով) ընդգծում են այն վստահությունը, որը այն ներշնչում է ընտրողին՝ համայնքի զարգացման տեսլականի հետ կապված: Ոչ կուսակցական հարցվողները, իրենց հերթին, կարևորում են անձի և թիմի գործոնը, սակայն թիմը չի նույնականացվում լայն իմաստով կուսակցության հետ: Հարկ է նաև նշել, որ չնայած ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուները ամեն դեպքում ներկայացված են եղել կամ որևէ կուսակցության ցուցակով, կամ մեկից ավելի կուսակցությունների կողմից ստեղծված դաշինքների ցուցակով, այդ կուսակցությունների կարևորություն կամ ազդեցությունը չի ընդգծվել, անվանումները չեն նշվել անկուսակցական հարցվողների կողմից:

«... կուսակցության պարագայում մարդիկ կարան ունենան
վստահություն կամ չունենան վստահություն, այսինքն, մեծ հաշվով, շատ էական է թեկնածուն ու
ավագանու ցանկը, որը կուսակցություն է ներկայացնում:»
Համայնքի ղեկավար

«... մեր համայնքում, որպես տենց, հիմնվել են անհատական մարդկանց վրա, համայնքի ղեկավարին բոլորը ճանաչում են, ընդունում են, հարգում են, հավատում են ու տեսել են իրա կատարած աշխատանքը, հիմնականում, մարդիկ քվեարկեցին հենց իրա շնորհիվ և մեր թիմային աշխատանքի շնորհիվ, կուսակցությունը, իհարկե, օգնեց էլի, բայց հիմնականը, իմ կարծիքն ա սա, մեր թիմի աշխատանքը և համայնքի ղեկավարի դերը...»
Համայնքի ղեկավարի տեղակալ

«Ճիշտն ասած դեռ ՏԻՄ_երը նոր են անցում կատարում համամասնական ընտրական համակարգին ու էդ համակարգն էլ, համամասնական համակարգն էլ դեռևս լիարժեք կայացած չի մեր մոտ և հասարակության կողմից էլ դեռևս լիարժեք ընկալում չի ունեցել, հիմնականում ՏԻՄ-երի կողմից էլ դարձյալ մեծ դեր ունի կոնկրետ 1-ին համարի անձը, չնայած որ կուսակցական պատկանելությունն էլ կարևորվում ա, բայց ամեն դեպքում, դեռևս մեծ ազդեցություն կա, թե ով է առաջին համարը:»
Համայնքի ղեկավարի տեղակալ

Ընտրական օրենսգրքի փոփոխություններով այժմ պահանջվում է ընտրություններին առաջադրվելու համար նախընտրական ցուցակում ներառել համայնքում միավորված բնակավայրերի առնվազն կեսից թեկնածուների, իսկ թեկնածուների սեռերի համամասնությունը չպիտի գերազանցի 70/30 տոկոսը: Չնայած այս կարգավորումները որոշ քաղաքական գործիչների և ընտրական հանձնաժողովների կողմից ընկալվում էին որպես բավականին խիստ, հարցվածները չեն նշել դրանց հետ կապված որևէ խնդիր: Ավելին, այդ պահանջին համապատասխանելը հարցվողների համար հանդիսանում է պարծենալու առիթ և ներկայացվում, որպես շարունակական քաղաքական-մշակութային փոփոխության փուլ, որին իրենք աջակցում են:

«...համենայնդեպս ես ու ինձ շրջապատող մարդիկ ընդունել ենք, որ մեր համակարգում պետք է լինեն կանայք, որովհետև եթե կին, աշխատանքի մեջ կին կա, մի քիչ ուրիշ ձև ա լինում էդ աշխատանքը, իմ կարծիքով, ավելի հստակ ա գնում առաջ, ավելի, շփման, հարաբերությունները ավելի ուրիշ հարթակի մեջ ա լինում, մի խոսքով, էդ ամեն ինչը, իմ կարծիքով, ճիշտ ա թե՛ քաղաքականության, թե՛ բոլոր ոլորտներում պիտի կին լինի, էդտեղ խտրականություն մենք չենք ընդունում:» Համայնքի ղեկավարի տեղակալ
«Այ հենց օրենքի պահանջով ժամանակի ընթացքում արդեն դա կդառնա ավանդույթ, ըստ դրա արդեն կանայք էլ կներգրավվեն, կանայք էլ քաղաքականության մեջ ավելի կոմպետենտ կդառնան, հիմա շատերը, մենք գիտենք, որ մեր երկրում հիմնականում կանայք խուսափել են քաղաքականությամբ զբաղվեն, մեծամասամբ տղամարդիկ են եղել, բայց քանի որ արդեն կա օրենքի պահանջ, ընթացքում դա կդառնա սովորական երևույթ»
Համայնքի ղեկավարի տեղակալ

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես է որոշվում թեկնածուների նախընտրական ցուցակը՝ բոլոր հարցվողները հաստատել են կուսակցության դերը, սակայն պետք է ուշադրություն գրավել կարևոր հանգամանքին: Կուսակցության տարածքային կառույցի/գործիչների կողմից առաջարկության հիման վրա, որոշակի չափանիշներով որոշում կայացնելու, համայնքի ղեկավարի որոշված թեկնածուի հետ ավագանու թիմի թեկնածուներին որոշելու և այդպես «փոխհամաձայնեցված» ցուցակ կազմելու, ենթադրյալ ժողովրդավարական գործընթացի փոխարեն, հարցվողները նշել են միայն կուսակցության վարչության դերը, վարչության որոշումը: Այս իրադրությունը վկայում է ՀՀ-ում գործող կուսակցությունների տարածքային կառույցների և ուրեմն ընդհանրապես կուսակցությունների թերի կայացման մասին:

Միաժամանակ հարցվողները այս կամ այն ձևով պնդում են, որ իրենց ավագանու թեկնածուները ներկայացնում են տարբեր մասնագիտական ոլորտներ, տարբեր բնակավայրեր, իրավագիտակից են և պատրաստակամ՝ բնակչության հետ շփվելու: Այս պնդումը, այնուամենայնիվ, հակասության մեջ է մտնում ՖԽՔ-ների արդյունքում ստացված տվյալների հետ, որոնք ցույց են տալիս ավագանու անդամների տեսանելիության բավականին ցածր մակարդակը:

«X-ից ավել բնակչություն կա մեր համայնքում, եթե պատկերացրեք բոլորը գան, չի լինի աշխատանքը մեր, դրա համար ավագանիները շատ են օգնում, գնալով, ծանոթանալով խնդիրներին, հետո արդեն ավագանիների նիստերում բարձրաձայնում են, մեծամասնությունը ավագանիների էդ տեսակի մարդիկ են:»
Համայնքի ղեկավարի տեղակալ

Անցնելով համայնքի տարբեր խմբերի ներգրավմանը համայնքի սոցիալ-մշակութային կյանքում՝ հարցազրույցներում քննարկվել է համայնքապետարանի դերը այդ

մասնակցության խթանման գործում: Այս հարցում բոլոր հարցվողների մոտ գերակշռում է նյութական ենթակառուցվածքների զարգացման կարևորությունը: Որպես բնակչության ներգրավման հիմնական մեխանիզմ համայնքների ներկայացուցիչներն ընդգծել են երիտասարդության նախաձեռնությունների աջակցումը: Հարկ է նշել, որ նաև ՖԽՔ-ների ընթացքում մասնակիցները որպես մասնակցության օրինակ առավել հաճախ հիշատակում էին երիտասարդների համար կամ երիտասարդների կողմից իրականացվող միջոցառումները:
Համայնքներից երկուսում փաստացի իրականացվել էին մշակութային փառատոներ ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ, իսկ հարցվողներից մեկը նաև հատուկ գրավել էր ուշադրությունը այդ հանգամանքի վրա և խոսել համայնքի համար ազգային փոքրամասնության ներկայացուցիչների[13] ներգրավման օգուտների մասին:

«...հրավիրել էինք համայնքում ապրող բոլոր ազգային փոքրամասնություններին, սակայն միայն հնդիկներն էին ներկա, եզդիական ծագմամբ մեր բնակիչներից մի քանիսը նույնպես ներկա էին, ցավոք սրտի ներկա չէին ռուսական ծագմամբ մեր բնակիչները, բայց բավականին գեղեցիկ միջոցառում էր... ... մենք մեր հնդիկ բնակիչների, փոքրամասնության անդամների

հետ համատեղ որոշեցինք միջհամայնքային, միջքաղաքային կապեր

հաստատել հնդկական քաղաքների հետ...»

Համայնքի ղեկավարի տեղակալ

Հատկանշական է, որ երբ խոսքը գնում է ավելի հստակ՝ ազգային փոքրամասնությունների կամ կրոնական խմբերի, իրենց խնդիրների, ՏԻՄ-ում ներգրավման մասին, համայնքների ղեկավարները տարբեր ձևակերպումներով փորձում են ստեղծել խնդիր չլինելու պատկեր, որում կամ անտեսում են առանձին խմբերի (մասնավորապես կրոնական խմբերի լինելու փաստը) կամ մերժում են ազգային փոքրամասնությունների (հիշատակվել են, ըստ էության, միայն եզդիները) սուբյեկտայնությունը:

«Իհարկե, մենք որևիցե մեկին չենք կարող առանձնացել, եզդիները հայ են»
Համայնքի ղեկավար
«Նենց, ոնց որ տեղի մարդիկ, որոնք էդ խմբերին չեն պատկանում, այսինքն տարբերություն չկա, ակնհայտ չի երևում»
Համայնքի ղեկավար
«...ազգային փոքրամասնության տեսանկյունից ես էս կարճ կառավարման ընթացքում որևէ խնդրի չեմ հանդիպել կամ խնդիր չի բարձրաձայնվել» Համայնքի ղեկավար

«Չէ, ամեն դեպքում մեր մոտ ինչ-որ խնդիրներով չեն եկել, բնակչության շրջանում շփվելուց չենք լսել, որ ինչ-որ առանձին ինչ-որ խնդիրների են բախվել իրանք կամ նման բան, չէ» Համայնքի ղեկավարի տեղակալ

13 Չնայած խոսքը այս դեպքում գնում է հնդկաստանից ժամանած անձանց մասին, որոնք չեն պատկանում Հայաստանում ճանաչված ազգային փոքրամասնությունների խմբերին, համայնքում իրենց տևական բնակությունը թույլ է տալիս կիրառել այդ ձևակերպումը:

Բացառություն են կազմել Մեծամոր և Փարաքար համայնքներից հարցվողները, ընդ որում, Փարաքարի մասին խոսելիս հարցվողը նշել է, որ փորձել են ներգրավել ԱՓ խմբերից ավագանու թեկնածուներ և ստացել են մերժումներ:
ԱՓ խմբերից ավագանու մեկական թեկնածուներ եղել են միայն Մեծամոր և Խոյ համայնքներում. Մեծամորում այդ թեկնածուն հայտնվել է ավագանու կազմում, Խոյ համայնքում՝ ոչ:
Ուշագրավ է, որ երկու դեպքում էլ հարցվողները պնդում են, որ ազգությամբ եզդի թեկնածու ունենալու որոշումը «նույնիսկ չի էլ քննարկվել», որոշված է եղել «պարտադիր ունենալ»: Ներկայացնելով այդ մեկական թեկնածուների ներառումը ցուցակում որպես էական ձեռքբերում երկու հարցվողներն էլ մի փոքր վերաձևակերպում են իրողությունները.

«...մենք եզդի ավագանու անդամներ ունենք, մենք իրանց անպայման ուզեցել ենք, որ իրանք լինեն մեր ցուցակում»
Համայնքի ղեկավարի տեղակալ

«...ցավոք ձայների այնպիսի բաշխվածություն է եղել որ այս պահին դեռևս ավագանու անդամ չէ, բայց ես լիահույս եմ շատ ուրախ կլինեմ որպեսզի գա այդ օրը, որ մենք ունենանք ավագանու անդամ ազգությամբ եզդի»

Համայնքի ղեկավար

«...մենք եզդի ավագանու անդամներ ունենք, մենք իրանց անպայման ուզեցել ենք, որ իրանք լինեն մեր ցուցակում»
Համայնքի ղեկավարի տեղակալ

«...ցավոք ձայների այնպիսի բաշխվածություն է եղել որ այս պահին դեռևս ավագանու անդամ չէ, բայց ես լիահույս եմ շատ ուրախ կլինեմ որպեսզի գա այդ օրը որ մենք ունենանք ավագանու անդամ ազգությամբ եզդի»

Համայնքի ղեկավար

Հստակ է, որ ցուցակում հերթական համարը որոշելը ամբողջությամբ գտնվում է կուսակցության հնարավորությունների տիրույթում, իսկ մեկ ավագանու անդամը չի կարող համարվել մի քանի անդամ: Ազգային փոքրամասնությունների ներկայացվածության և ներգրավման չափազանցման այս երևույթը (նաև այլ համայնքների մասին խոսելիս) տեղի է ունեցել նաև մյուս համայնքներից հարցվողների հետ զրույցներում: Համայնքի ղեկավարներից երկուսը, ձգտելով ապացուցել, որ ՀՀ-ում խառը բնակչությամբ խոշորացված համայնքի ղեկավարի դերում կարող է լինել ԱՓ ներկայացուցիչ, վկայակոչում են գերակշռող եզդիական բնակչությամբ Ալագյազ և Ֆերիկ համայնքները: Ալագյազում այլ եզդիաբնակ

բնակավայրերի հետ խոշորացումից հետո վերընտրվել էր ազգությամբ եզդի Ջասմ Մախմուդովը[14]:
Երբ հարցվողները խոսում են խառը բնակչությամբ խոշորացված համայնքում ԱՓ ներկայացուցչի համայնքի ղեկավարի դերում ընտրվելու հավանականության, դրան նպաստող գործոնների մասին, նկատվում է ընկալումների տեղաշարժ՝ անհատի կամ կուսակցություն դերի հարցում: Եթե իրենց, իրենց թիմի մասին խոսելիս ավելի էր ընդգծվում անհատի դերը՝ չարժեզրկելով կուսակցական աջակցության գործոնը, ապա ԱՓ-ների մասին խոսելիս ավելի երևացող է դառնում կուսակցության աջակցության դերը՝ չարժեզրկելով անհատի դերը: Կուսակցության աջակցությունը այստեղ, սակայն, խաղում է ավելի շատ կանխատեսելիություն հաղորդող նշանակություն:

«Քաղաքական ուժի կողմից ներկայացված լինելը հերթական կսպող գործիքն ա ու կա ևս մի մարմին, որին դարձյալ հաշվետու ա տվյալ թեկնածուն կամ ղեկավարը, էդքանով կարևոր ա ու նաև բնակիչն էլ, հստակ իմանալով, կուսակցության ուղղվածությունը, արդեն իմանա, որ իր համայնքի ղեկավարը էդ նույն ծրագրով, նույն գաղափարի հետևից գնացող թեկնածու է:»
Համայնքի ղեկավարի տեղակալ

Միաժամանակ, հարկ է նշել, որ բոլոր հարցվողները խոսքը ձևակերպում էին հստակ դրական ինտոնացիաներով. եղբայրության, բարեկամության, լիակատար իրավահավասարության վերաբերյալ պնդումներով: Նույնն էր նաև վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած, սակայն խիստ մասնակի իրագործվող պարտավորությունների վերաբերյալ՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով կրթության, ՏԻՄ-ի հետ մայրենի լեզվով հաղորդակցվելու, բնակավայրերի անվանումների իրենց լեզվով անվանումների օգտագործման հնարավորության հետ կապված: Սխեմատիկ առումով մոտեցումը մերժում էր խնդրի առկայությունը, հղվում ԱՓ-ների ներկայացուցիչների կողմից խնդրով դիմելու դեպքերի բացակայության վրա, պատրաստակամություն հայտնում գործել համապատասխանաբար, եթե լինի նման որոշում, հղվել որևէ բնակավայրում խնդրի մասնակի լուծված լինելու փաստի վրա:

«...որտեղ եզդիական համայնքը ավելի մեծ ա, որտեղ անհրաժեշտություն, ժամանակի ընթացքում դա ձևավորվել ա, որտեղ անհրաժեշտություն չի եղել, չի ձևավորվել:»
Համայնքի ղեկավար

Հատկանշական է, որ հարցվածներից ոչ ոք չի իմացել Շրջանակային համաձայնագրի մասին: «Դիմում են հայերեն» պնդումը հարցվածների համոզմամբ չեզոքացնում էր թե դե յուրե

[14] Պարոն Մախմուդովի վերընտրվելու մասին անդրադարձ է եղել Անկախ դիտորդ դաշինքի զեկույցում. https://hcav.am/wp-content/uploads/2022/10/Սեպտեմբերի-25-ՏԻՄ-ընտրությունների-համայնքային-ամփոփում.pdf

ստանձնած պարտավորությունները, թե ազգային փոքրամասնությունների՝ մայրենի լեզվի զարգացման իրավունքի և ՏԻՄ-ի հետ հաղորդակցվելու փոխկապակցվածությունը: Ոչ հայերեն լեզվով ՏԻՄ-ին ներկայացվող դիմումների միակ հիշատակումը վերաբերվել է ռուսերեն դիմումների՝ 1990-ականներին Բաքվից փախստականների և Ռուսաստանի Դաշնությունից ժամանած ՀՀ քաղաքացիների կոնտեքստում:

«...այսինքն, երբ որ մենք գիտենք, որ ինքը հայերեն չի հասկանում, պատասխանը ռուսերեն ենք տալիս իրանց, բայց, իմ կարծիքով, եկդիները չունեն խնդիր հայերենի, դրա համար էդ խնդրի առաջ չենք կանգնել մենք:»

Համայնքի ղեկավարի տեղակալ

Ֆերիկ եզդիական համայնք

Ֆերիկ գյուղը առանձնանում է Արմավիրի մարզի մյուս համայնքներից, այն միակ չխոշորացված, միակ ամբողջությամբ եզդիաբնակն է և միաժամանակ միակն է, որում համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնում է ազգությամբ եզդին, իսկ տեղակալի պաշտոնը զբաղեցնում է (ազգությամբ հայ) կին:

Հետազոտող թիմին հաջողվել էր հարցազրույցի մասին պայմանավորվածություն ձեռք բերել համայնքի ղեկավարի տեղակալի հետ, սակայն անձնական պատճառներով հարցազրույցի իրականացումը հետաձգվել էր և իրականացվել արդեն հետազոտության արդյունքների ամփոփման փուլում: Այս, ինչպես և գրեթե բոլոր հարցերում սպեցիֆիկ իրողությունների պատճառով, հարցազրույցի վերլուծությունը ներկայացվում է առանձին:

Խոսակցության մեջ համայնքի չխոշորացված մնալը ներկայացվել է որպես փաստ, որը դուրս է քննարկման տիրույթից: Միաժամանակ խոշորացման գործընթացը անուղղակիորեն ազդել է նաև Ֆերիկի զարգացման վրա: Վերջին տարվա ընթացքում մի կողմից պետությունը, մյուս կողմից մարզի խոշորացված համայնքները զգալի դրամական աջակցություն են տրամադրել Ֆերիկին և ծրագրեր են իրականացրել: Ըստ հարցվողի 2016 թ.-ից ոչ ծավալով, ոչ բնույթով նման աջակցություն համայնքը չէր ստացել:

Լինելով համայնքապետարանում միակ կինը հարցվողը նշում է, որ տարիների աշխատանքի արդյունքում է «վաստակել հարգանքը», հաղթահարելով իր հանդեպ թե՛ որպես կին, թե որպես հայ կարծրատիպային մոտեցումը: Հատկանշական է, որ այդ «հարգանքը» չի փոխում ընդհանուր ընկալումը. *«...բայց իրանք չեն ընդունում, մի բան էլ ասեմ իրանք ուզում են անպայման իրանց ազգից լինի աշխատողը, հա ինձ ընդունել են հիմա ես դուրս գամ ինձնից հետո իրանք դժվար նոր աշխատողի ընդունեն:»*

Տարբերություն է նկատվում նրանում, թե ինչպես է համայնքային պաշտոնյան, ով քաղաքական թիմի անդամ չի, խոսում նույնպես քաղաքական թիմի անդամ չհանդիսացող ավագանու անդամների մասին: Ըստ էության նա միակն է բոլոր հարցվողներից, ով խոսում է ավագանու անդամների մոտ «բավարար» կրթության բացակայության, լիազորությունների թերի օգտագործման մասին: Սա այն քննադատությունն է, որը բազմիցս հնչում էր դեռևս չխոշորացված համայնքների վերաբերյալ: Ավելի կարևոր է, սակայն, որ հարցվողը նաև միակն է, ով թեկուզ և հարցական ձևակերպմամբ նշում է խտրականության պատճառով ՏԻՄ-ում և հանրային կյանքում թերի ներկայացվածության մասին:

> *«...էսօր էտ մարդիկ չունեն ինչ որ տեղ աշխատանք, ոչ մեկ ավագանի չի ու ասեմ ավելին, թեկուզ ... ... ավելի լավ օրենքներից են տեղյակ, բայց իրանք ոչ մի տեղ չկան, չգիտեմ դա ազգային խտրականություն ա, թե ի՞նչ:»*
>
> *«...իրանք իրանց մի քիչ հեռու են պահում, երևի մտածում են եզդի են իրանց ով առաջ կտանի, բայց պետքա էլի:»*
>
> *Համայնքի ղեկավարի տեղակալ կին*

Ուշագրավ է, որ 90%-ից ավել եզդիերեն խոսացող համայնքում բնակիչների սպասարկումը համայնքապետարանում իրականացվում է հայերեն լեզվով և եզդիերեն դիմելու կարգը չի քննարկվել. *«չէ, չկա, հայերենով ա լինում, իրանք էլ երևի հասկանում են չգիտեմ»:* Ավելին, չնայած Ֆերիկը ՀՀ-ում եզակի գյուղերից է, որի անվանումով ցուցանակը կրկնվում է նաև

եզդիերենով, կատարել է այդ քայլը ոչ թե սեփական նախաձեռնությամբ, այլ Արմավիրի մարզպետարանի առաջարկությամբ:

Եզրակացություններ

- ՏԻՄ համակարգում այսօր տեղի ունեցող գործընթացները, խոշորացումն ու համամասնական ընտրակարգի անցումը, ըստ էության ստանում են բավարար աջակցություն Արմավիրի մարզում: Ենթակառուցվածքների վրա իրականացվող ներդրումները, առանձին համայնքներում զուգահեռ իրականացվող աշխատանքները, նույնիսկ կետային լուծումները ունենում են մուլտիպլիկացվող ազդեցություն: Այս ազդեցությունը դրական ընկալում է ստեղծում բնակչության և պաշտոնյաների շրջանում, որը վստահության վարկ է տրամադրում փոփոխության արդյունքները ամրապնդելու համար:
- Միաժամանակ այս վստահության վարկը կարող է թուլացնել համակարգի հանդեպ վերահսկելիությունը՝ թե հանրության, թե պետական ապարատի կողմից: Այս վտանգը չկառավարելու պարագայում, կարող է ստեղծվել կուռ կուսակցական, ավելի բարձր մակարդակում սոցիալական բևեռացում հաստատող համակարգ:
- Ավագանու ինստիտուտի թուլությունը շարունակում է մնալ արդի խնդիր, համամասնական ընտրակարգը և բնակավայրային քվոտան թեկուզ և քայլեր են ճիշտ ուղղությամբ, չեն կարող համարվել բավարար: Այս իրողության երկու պատճառները փոխկապակցված են: Ցուցակը առաջնորդող համայնքի ղեկավարի անձնային գործոնը գերակշռում է թե բնակչության, թե պաշտոնյաների ընկալումներում, ինչը արտացոլում է հայաստանյան քաղաքական մշակույթը: Ավագանու անդամների լիազորությունների թերի օգտագործումը, անձնական լոյալությունը և նույնիսկ իրականացվող աշխատանքի անտեսանելիությունը համայնքի համար դարձնում են այդ ինստիտուտը «որոշումներ դակող» կցորդ, որը գալիս է առաջնորդի հետևից, ոչ թե առաջադրում է ղեկավարին իր կազմից:
- Ծառայությունների, կոմունալ, սոցիալական ոլորտի շուրջ կառուցված կենցաղը առաջնային պլան է հանում համայնքապետարանի աշխատակազմը և այդ աշխատակազմի մաս հանդիսացող վարչական ղեկավարների, որոնք լինելով բացարձակ կախյալ կարգավիճակում՝ շարունակում են վայելել բնակչության հարգանքն և վստահությունը:
- ՏԻՄ-ի հետ հարաբերվելիս հայերեն բանավոր դիմելու պրակտիկան, որը արդյունավետ և դյուրին է ընկալվում բնակչության և պաշտոնյաների կողմից ոչ միայն չի նպաստում նույնանման խնդիրների համակարգային կանխատեսելի լուծմանը, այլ նաև քողարկում է ավելի խորը մակարդակում առկա խնդիրը. ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուների դեգրադացումը և գետոյացումը: Ազգային փոքրամասնությունների խմբերից հարցվողներն իրենք են նշում, որ չեն ուզում կիրառել մայրենի լեզուն կամ չգիտեն այն: Ըստ էության սա հետևանք է ՀՀ-ում էթնիկ-մշակութային քաղաքականության և հիմք՝ ազգային փոքրամասնությունների շարունակվող ասիմիլացման և ինքնության լուծարման:
- ՏԻՄ-ի կառույցներում ազգային փոքրամասնությունների լեզվի օգտագործումը, ՏԻՄ-ում ազգային փոքրամասնությունների լեզուների կրողների ներգրավումը իհարկե չի կարող լուծել մշակույթի զարգացման կոմպլեքս խնդիրը, սակայն կարող է հանդիսանալ ցուցիչ՝ պետության կողմից արժևորման, մայրենի լեզվի կիրառման նորմալության և նեղ-կենցաղային տիրույթից դուրս դրա կիրառելիության:
- Ազգային փոքրամասնությունների հանդեպ վերաբերմունքը տարբերվում է տարբեր ազգությունների պարագայում, խոսողի կարգավիճակից, տարիքից, առնչության

փորձառությունից: Ազգային փոքրամասնությունների քաղաքացիական իրավունքները «պաշտպանող» հիմնական փաստարկը Զինված ուժերում նրանց ծառայելն է: Ընդհանուր առմամբ դրական և հարգալից վերաբերմունքին զուգահեռ առկա է «այլականությունը» ընդգծող պատկերացում, որի կառուցման գործում նվազ դեր չեն խաղում հենց ազգային փոքրամասնությունները՝ ավանդույթները, կենցաղը, ընտանեկան դրվածքը, սովորույթները դարձնելով պատնեշ, որը հեռու է դնում համայնքը լայն հասարակությունից, պահպանում այն, սակայն խոչընդոտում լիարժեք ներգրավման և զարգացման պրոցեսներին: Ավելի ծայրահեղ և մարգինալ մոտեցումը (*«Խի եթե մեր հայը կարա անի, խի գա եկդի նստի, խի ինչի՞ համար:»*) կարող է սպառնալիք հանդիսանալ ընդհանուր չեզոքության պայմաններում:

- Ազգային փոքրամասնությունների գերակշռող բնակչությամբ առանձին համայնքների չխոշորանալը (կամ Ալագյազ համայնքի պես միկրո-խոշորացումը) չեն կարող արդյունավետ լուծում համարվել, քանի որ խաթարում են համակարգի ընդհանուր ճարտարապետությունը և շարունակում անհավասարության և գետոյացման ամբողջությամբ չգիտակցվող պրակտիկան: Միաժամանակ լեգիտիմ և ընկալելի է այդ համայնքների բնակիչների կամ բնակիչների անունից արտահայտվող կարծիքը, թե խոշորացումը կարող է բերել համայնքների տարրալուծմանը խոշորացված համայնքում և ասիմիլացմանը:
- ՏԻՄ մակարդակում ազգային փոքրամասնությունների ներգրավման խթանումը հնարավոր է պետության պրոակտիվ քայլերի և կուսակցությունների, որպես ինստիտուտի, աջակցման դեպքում:
- Ազգային փոքրամասնությունների ներգրավմանը նպաստող գործոն կարող է լինել ընկալումը՝ համայնքի և Հանրապետության համար ռեսուրս լինելու մասին: Այս միտքը մի քանի անգամ ձևակերպվել է ՖԽՔ-ների ընթացքում և իլյուստրացիա է ստացել խորքային հարցազրույցներից մեկում՝ Հնդկաստանից ժամանած բնակիչների վերաբերյալ: Ըստ էության այս մի քանի պնդումները առավել դրականն էին բոլոր զրույցներում և կարող են ձևակերպվել որպես նարատիվ, որն առնվազն զսպող ազդեցություն կունենա «սպառնալիքի» նարատիվի հանդեպ:
- Ըստ էության այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ էին իրականացվել Հայաստանի խորհրդային փուլում, երբ, օրինակ, քուրմանջիով ռադիոհեռարձակման աուդիտորիան ոչ միայն Խորհրդային Հայաստանի եզդիներն և քրդերն էին, այլև Թուրքիայի Հանրապետության արևելքում ապրողները: Անկախության փուլում Հայաստանի Հանրապետությունը չի կարողացել բազմապատկել այս ջանքերի տնտեսական, մշակութային, դիվանագիտական արդյունքը, սակայն մնացորդային ազդեցությունը դեռևս կարող է մեկնարկային լավ կետ լինել:

Առաջարկություններ

Քաղաքացիական հասարակության և համայնքային կազմակերպություններին

- Հասարակական միավորումները այն ստորին օղակն են, որն առավել ճկուն կերպով կարող է այսօր կանխորոշել հանրային դիսկուրսի զարգացումը ապագա տարիների համար: Մոնոէթնիկ համարվող Հայաստանի Հանրապետությունում մշակութային բազմազանության, տարածաշրջանի ժողովուրդների համար գրավիչ կերպարի ստեղծումը պահանջում է սեփական խոսնակների: Որպես իրավական, ժողովրդավար և անվտանգ պետություն Հայաստանը ներկայացնելու համար Հայաստանյան հասարակությունը պիտի կարողանա գտնել այդ խոսնակներին խոցելի և նվազ ներկայացված խմբերից, որոնք կկարողանան խոսել առաջին դեմքով:
- *Երիտասարդական մասնակցության, առաջնորդության, հանրային վերահսկողության ռեսուրսի զարգացմանը ուղղված ծրագրերը պիտի որպես թիրախ ընդունեն ազգային փոքրամասնությունների խմբերը՝ հնարավորություններ նախատեսելով իրենց մայրենի լեզուների օգտագործման և համայնքներին վերաբերելի խնդիրները լուծելու համար:*

Տեղական ինքնակառավարման մարմիններին

- ՏԻՄ-երը կարող են և պիտի պրոակտիվ գործունեություն ունենան Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում: Ազգային փոքրամասնությունների լեզուների և մշակույթի զարգացմանը ուղղված Շրջանակային համաձայնագրով նախատեսված քայլերի իրականացումը, նույնիսկ սահմանափակ արդյունքներով, կնպաստի ԱՓ խմբերի ինքնության ամրապնդմանը, որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի եզդի, քուրդ, ասորի, ռուս, ակտիվացնել այդ խմբերը՝ ի նպաստ համայնքների զարգացման: Ազգային ուրույն մշակույթը, մշակութային կոթողները կարող են գրավիչ լինել տուրիզմի զարգացման տեսանկյունից, իսկ ԱՓ-ների ակտիվ համայնքը կարող է կարևոր դեր խաղալ այլ պետություններում իրենց ազգի ներկայացուցիչների միջոցով միջհամայնքային կապեր ստեղծելու տեսանկյունից:
- *Համայնքապետարանները պիտի կարողանան տրամադրել ծառայությունները ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուներով և հավասարապես ապահովել բնակչության սոցիալ-մշակութային զարգացումը՝ անկախ ազգությունից:*
- *Այն բնակավայրերում, որոնցում կոմպակտ բնակվում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պիտի քննարկվի բնակավայրի այդ ազգության մայրենի լեզվով տեղանունների կիրառումը (ինչպես դա արվել է Ֆերիկ համայնքում):*
- *Համայնքի զարգացման հնգամյա պլանի և բյուջեի մշակման փուլում ներգրավել համայնքում բնակվող ԱՓ-ների ներկայացուցիչների՝ սոցիալ-մշակութային գործողություններն և ծախսերը նախագծելիս ԱՓ խմբերի շահերի և կարիքների ներկայացվածության նպատակով:*

Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեին

- Վիճակագրական կոմիտեն իր պատրաստվող զեկույցներում ԱՓ-ների վերաբերյալ ներկայացնում է միայն տարբեր խմբերի քանակները, ինչը թույլ չի տալիս ամբողջությամբ հասկանալ ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ հանդիսացող բնակչության առկա սոցիալ-ժողովրդագրական վիճակը: Միաժամանակ այդ բացը չեն կարող լրացնել անկախ սոցիոլոգիական քանակական հետազոտությունները՝ պոպուլյացիայի փոքր լինելու և

ընտրանքում բավականաչափ ներկայացվելու անհնարինության պատճառով: Այսպես, չունենալով բազմակողմանի վիճակագրություն մենք ընդամենը ականատեսն ենք դառնում ԱՓ-խմբերին պատկանող ՀՀ բնակչության տոկոսի և քանակի նվազման:

- ՀՀ Վիճակագրական կոմիտեն պիտի իր տարեկան զեկույցներում ամփոփի ԱՓ-ների ժողովրդագրության, կենսամակարդակի և սոցիալական ոլորտին վերաբերվող հարցերը և հասանելի դարձնի վիճակագրությունը հանրության համար:

ՀՀ ՏԿԵ նախարարությանը

- Նախարարությունը խոշորացման ծրագրում չի կարող արհամարհել ազգային փոքրամասնությունների մտավախությունները և շահերը, որոնք կապված են խոշորացման գործընթացի անհաջող ընթացքի սպառնալիքների հետ: Միաժամանակ առանձին բնակավայրեր չպիտի խոչընդոտ դառնան Հայաստանում ՏԻՄ համակարգի ճարտարապետության ամբողջականացմանը: Իրավիճակը, երբ մոլոկանական Ֆիոլետովո և Լերմոնտովո գյուղերը կամ եզդիական Ֆերիկ գյուղը մնում են չխոշորացված, բայց «շրջափակված» խոշորացված համայնքի բնակավայրերով չի կարող երկար ժամանակ մնալ չլուծված:
- *Անհրաժեշտ է խոշորացման փնջերը մշակելիս հաշվի առնել ազգային փոքրամասնությունների մտավախությունները և մշակել խոշորացվող համայնքը այնպես, որ ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության բնակավայրերը ստանան բավարար երաշխիքներ և դեր, որպես փնջի կենտրոն, ենթակառուցվածքների հանգույց, բյուջետային երաշխիքներ:*

ՀՀ Արդարադատության նախարարությանը

- ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ԱԺ-ում ազգային փոքրամասնությունների ներկայացվածության երաշխիքը, ինչպես և ԸՕ-ով նախատեսված կարգը փաստացի չեն արտացոլում ո՛չ ազգային փոքրամասնությունների համայնքային կազմակերպությունների ակնկալիքները, ո՛չ ընտրական գործընթացների ոլորտում գործող փորձագիտական շրջանակների տեսլականը, ո՛չ էլ նպաստում են ազգային փոքրամասնությունների տեսանելիության, ներկայացվածության և ներգրավման ավելացմանը:
- *Անհրաժեշտ է Ընտրական օրենսգրքի ընթացիկ փոփոխությունների նախագծի մշակման փուլում ստեղծել ոլորտային աշխատանքային խումբ: Այդ ձևաչափը պիտի հնարավորություն ստեղծի ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների համայնքների, տեղական և միջազգային փորձագիտական համայնքի, խորհրդարանական և արտախորհրդարանական քաղաքական կուսակցությունների միջև երկխոսության միջոցով գտնել արդյունավետ, իրավունքահենք, շահակից խմբերի կարիքներն և ռիսկերը հավասարակշռող կարգավորումներ:*

Ազգային ժողովին

- Տեղական ինքնակառավարման համակարգում դեռևս շարունակում է կարևոր մնալ բնակավայրերի վարչական ղեկավարների դերը: Ավելին, որոշակի իմաստով այդ պաշտոնյաները իրականացնում են բնակչության և համայնքի ղեկավարի միջև այն կապող օղակի դերը, որը ենթադրաբար պիտի ստանձներ ավագանին: ՖԽՔ-ներից երևում է, որ բնակիչները ոչ միայն կարևորում են այդ դերը ՏԻՄ համակարգում, այլև

տարբերակում են դնում այլ բնակավայրից նշանակված ժամանակավոր պաշտոնակատարի և իրենց բնակավայրից (կրկին նշանակված) վարչական ղեկավարի հանդեպ վերաբերմունքում: Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը, սակայն, թողնում է այդ պաշտոնում նշանակումը համայնքի ղեկավարի հայեցողության վրա և թույլ տալով ավագանու որոշմամբ չնշանակել վարչական ղեկավար 500-ից պակաս բնակչություն ունեցող բնակավայրերի համար:

- Անհրաժեշտ է վերանայել Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի դրույթները, մասնավորապես 500 բնակչից պակաս ունեցող բնակավայրերում վարչական ղեկավար չնշանակելու վերաբերյալ: Այս պաշտոնի կարևորությունը ընդունելով անհրաժեշտ է սահմանել ազգային փոքրամասնությունների խմբերով բնակեցված համայնքների համար այդ խմբերից վարչական ղեկավար նշանակելու կարգը՝ ըստ բնակչության տոկոսի, իսկ առավելապես ԱՓ-ներով բնակեցված բնակավայրերի համար պարտադիր դարձնել այդ ԱՓ-ից վարչական ղեկավարի նշանակում անկախ բնակիչների թվից:

Հանրային ֆինանսավորում ստացող կուսակցություններին

- Կուսակցությունների մասին ՀՀ Սահմանադրական օրենքի կուսակցությունների պետական ֆինանսավորմանը վերաբերվող Հոդված 26-ի 2-րդ, 6-րդ և 7-րդ մասերի համաձայն համապատասխան կառուցվածքով կուսակցությունները հնարավորություն ունեն ստանալ հանրային նպատակային ֆինանսավորում՝ կանանց, երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին կուսակցության գործունեության մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով: Այնուամենայնիվ ազգային փոքրամասնությունների ներգրավման վերաբերյալ փաստող ոչ փաստաթղթային, ոչ ընտրական գործընթացների ընթացքում երևացող որևէ արդյունք հետազոտող թիմին հայտնի չէ:
- *Անհրաժեշտ է գործուն քայլեր իրականացնել ազգային փոքրամասնությունների տարածքային կառույցներում ներգրավման ուղղությամբ: Այս ուղղությամբ հաջողությունները կարող են մրցակցային առավելության դառնան կուսակցությունների համար ՏԻՄ ընտրությունների փուլում: Միաժամանակ սա կարող է «բնական», առանց նոր կարգավորումների լուծել ավագանիներում և ԱԺ-ում ԱՓ-ների թերի ներկայացվածության խնդիրը, ինչպես և ավելի սահուն դարձնել համայնքների խոշորացման գործընթացը:*

Կենտրոնական ընտրական հանձնաժողովին

- ՏԻՄ և համապետական ընտրական գործընթացների նախապատրաստական փուլում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկումը չպիտի դուրս մնա ԿԸՀ գործողություններից և չի կարող իրականացվել «ըստ պահանջի» կամ հատվածական դրամաշնորհային ծրագրով: Ներկայիս իրադրությունն, երբ մոլոկանական գյուղերի տեղամասերում օգտագործվում է քվեաթերթիկի ռուսերեն թարգմանված նմուշը (ըստ ԱԺ ազգությամբ ռուս պատգամավորի պահանջի), իսկ եզդիաբնակ և ասորաբնակ բնակավայրերի համար տպված իրազեկման նյութերը չեն տրամադրվում բնակիչներին չի կարող համարվել ընտրությունների հրապարակայնության հետ կապված պարտավորությունների պատշաճ կատարում:

- *ԿԸՀ-ն պիտի նախատեսի իրավեկման նյութերի հիմնական փաթեթի թարգմանությունը ՀՀ-ի ազգային փոքրամասնությունների լեզուներով և օգտագործի դրանց տարածման նույն մեխանիզմները, ինչ հայալեզու իրավեկման պարագայում:*